



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 18

ք. Արտաշատ

«17» «02» 2012թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2012թ. պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրանագրի 1.6.կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով մարզին հատկացված գումարից 1000.0 (մեկ միլիոն) դրամ գումար հատկացնել մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ որպես դրամական օգնություն համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Սիմոնյանին՝ կատարել համապատասխան վճարումներ:

ՄԱՐԶՊԵՏ՝

Է.Ս. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՑՈՒՑԱԿ

Արարատի մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին
տրվող դրամական օգնությունների

1. Անդրեասյան Գայանե-60.0 հազ. դրամ
2. Ասլանյան Ջեմֆիրա- 30.0 հազ. դրամ
3. Զաքարյան Համլետ -50.0 հազ. դրամ
4. Դավթյան Շուշանիկ -30.0 հազ. դրամ
5. Սիմոնյան Անդրանիկ -50.0 հազ. դրամ
6. Հովհաննիսյան Գայանե-20.0 հազ. դրամ
7. Հովակիմյան Վարթեր -50.0 հազ. դրամ
8. Խաչատրյան Նինա -50.0 հազ. դրամ
9. Հակոբյան Հայկուշ -50.0 հազ. դրամ
10. Գյուլամիրյան Ռաֆիկ -30.0 հազ. դրամ
11. Հովհաննիսյան Հունան - 30.0 հազ. դրամ
12. Գասպարյան Էլվերա -30.0 հազ. դրամ
13. Հովհաննիսյան Ժանետա-50.0 հազ. դրամ
14. Առաքելյան Ռիմա -25.0 հազ. դրամ
15. Մխիթարյան Անի -50.0 հազ. դրամ
16. Մկրտչյան Ալբերտ -50.0 հազ. դրամ
17. Պողոսյան Լաուրա -20.0 հազ. դրամ
18. Արամյան Սուսաննա-70.0 հազ. դրամ
19. Բաղդասարյան Հասմիկ -25.0 հազ. դրամ
20. Ամիրխանյան Գարեգին -100.0 հազ. դրամ
21. Նահապետյան Գեղամ -50.0 հազ. դրամ
22. Մարգարյան Անուշ -50.0 հազ. դրամ
23. Ասատրյան Վերգուշ -20.0 հազ. դրամ
26. Թովմասյան Աղավնի -10.0 հազ. դրամ

Ընդամենը՝ 1000.0 հազ. դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ



Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 17,

ք. Արտաշատ

< 15 > 02 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի ԹԻՎ 01 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության
օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետով.

Որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2012թ.-ի հունվարի 9-ի
"Արարատի մարզում 2012թ.- հունվարից 1996 թ. ծնված պատանիների կցագրում և
բժշկական ստուգում անցկացնելու մասին" թիվ 01 որոշման մեջ կատարել հետևյալ
փոփոխությունը՝ որոշման հավելված 1-ի 2-րդ կետում „Գ. Չոբանյան „ բառերը
փոխարինել „Ա. Ղազարյան „ բառերով:

ՄԱՐԶՊԵՏ՝

Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

№ 16 . . .

ք. Արտաշատ

« 10 » « 02 » 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2012թ. պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրանագրի 1.6.կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով մարզին հատկացված գումարից 1000.0 (մեկ միլիոն) դրամ գումար հատկացնել մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ որպես դրամական օգնություն համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Սիմոնյանին՝ կատարել հայնապատասխան վճարումներ:

ՄԱՐԶՊԵՏ՝

Է.Ս. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ

2012 թ. հետտրվար «10»

№ 16 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ



Արարատի մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվող դրամական օգնությունների

1. Առաքելյան Հասմիկ-50.0 հազ. դրամ
2. Իսկանդարյան Ամալյա- 100.0 հազ. դրամ
3. Մուրադյան Արթուր -70.0 հազ. դրամ
4. Նահապետյան Աղվան -50.0 հազ. դրամ
5. Մխիթարյան Վարդան-50.0 հազ. դրամ
6. Թիթիզյան Թովմաս -30.0 հազ. դրամ
7. Խալաթյան Արսեն -100.0 հազ. դրամ
8. Սարգսյան Արաքսյա-190.0 հազ. դրամ
9. Գրիգորյան Լաուրա -30.0 հազ. դրամ
10. Բաղդասարյան Անահիտ -30.0 հազ. դրամ
11. Հարությունյան Գոհար -30.0 հազ. դրամ
12. Միրզոյան Գոհար -30.0 հազ. դրամ
13. Սարիբեկյան Արուսյակ - 100.0 հազ. դրամ
14. Մանուկյան Զարինե -30.0 հազ. դրամ
15. Սաֆարյան Ալեքսան-30.0 հազ. դրամ
16. Պողոսյան Նարինե-20.0 հազ. դրամ
17. Առաքելյան Ժենիկ -60.0 հազ. դրամ

Ընդամենը՝ 1000.0 հազ. դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 15

ք. Արտաշատ

< 10 > 02 2012թ.

ԱՐԱՐԱՏԻ՝ ՄԱՐԶՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 10 նոյեմբերի 2011թ. թիվ 1582-Ն որոշման 3-րդ կետով.


Որոշում եմ՝

- Ստեղծել արտակարգ իրավիճակների հետևանքով Արարատի մարզում ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողով՝ համաձայն հավելված 1-ի:
- Հաստատել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող մարզային հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված 2-ի:
- Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետի տեղակալ Ա. Մուրադյանի վրա:

ՄԱՐԶՊԵՏ՝

Է.ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հավելված N 1



մարզպետի 2012թ.

№ 15 որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՑՈՒ ԳՆԱԿԱՏՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՁԱՆՅ ՊԱՏՃԱՌՎԱԾ ԿՆԱՍՆԵՐԸ ԳՆԱԿԱՏՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Է.Բարսեղյան

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ Արարատի մարզպետ

Ա.Մուրադյան

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

- Ս.Մինասյան - ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ
- Կ.Հակոբյան - ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ
- Վ.Հովսեփյան - Արարատի ՄՓՎ պետ
- Հ.Սարգսյան - Արարատի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի պետ
- Ա.Լալայան - ՏԻ և ՀԳՏՄ հարցերով վարչության պետ
- Տ.Վիրաբյան - Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
- Ռ.Մկրտչյան - Քաղաքաշինության վարչության պետ
- Լ.Խաչատրյան - Ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
- Ս.Խաչատրյան - Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ
- Գ.Միրզոյան - Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ
- Ա.Օրդոյան - Հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ
- Ա.Պողոսյան - Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ

- Ա.Զաքարյան - ՀՀ կառավարությանն աղընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արարատի մարզային ստորաբաժանման ղեկավար
- Մ.Դավթյան - Քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ
- Ե.Հակոբյան - Քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
- Ա.Հակոբյան - Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ
- Հ.Բադալյան - Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետ
- Ռ.Թարվերդյան - Ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ
- Ա.Մկրտչյան - Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ
- Ա.Խաչատրյան - Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի առաջատար մասնագետ
- Պ.Մարգարյան - ՏԻ և ՀԳՏՄ հարցերով վարչության առաջատար մասնագետ
- Հ.Առաքելյան - ՏԻ և ՀԳՏՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ

Աշխատակազմի ղեկավար՝



Ա.Վարդանյան



Հավելված N 2

Արարատի մարզպետի 2012թ.

հունիսի 15-ի N 15 որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ և ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՃԱՆԳ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող մարզային հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հանդիսանում է Արարատի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման ոլորտում (այսուհետ՝ ոլորտ) համակարգող խորհրդակցական մարմին:

2. Հանձնաժողովին հաշվետու են Արարատի մարզի համայնքային խորհրդակցական մարմինները (հանձնաժողովները):

3. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:

4. Հանձնաժողովին կից՝ հանձնաժողովի անդամների կողմից լիազորված ներկայացուցիչների ընդգրկմամբ կարող են ստեղծվել աշխատանքային խմբեր:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Հանձնաժողովի խնդիրներն են՝

1) արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման բնագավառում պետական քաղաքականության իրականացման համար առաջարկությունների մշակումը.

2) արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման միջոցառումները համակարգված ու օպերատիվ ապահովելու նպատակով առաջարկությունների ներկայացումը,

3) արտակարգ իրավիճակների հետևանքով առաջացած վնասների փոխհատուցման և պետական աջակցության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

7. Հանձնաժողովի նիստերը հիմնահարցերի վերաբերյալ անցկացվում են եռամսյակը մեկ, իսկ ընթացիկ հարցերի վերաբերյալ՝ ըստ դրանց առաջացման անհրաժեշտության:

8. Հանձնաժողովի նիստերն իրավագոր են հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելիի մասնակցության դեպքում:

9. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպում և նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը:

10. Հանձնաժողովն իր նիստերի ընթացքում ընդունում է որոշումներ:

11. Հանձնաժողովի որոշումները հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացվում են Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին:

12. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայներով:

13. Հանձնաժողովի որոշման վերաբերյալ հանձնաժողովի անդամը կարող է ունենալ հատուկ կարծիք, որը կցվում է նիստի արձանագրությանը:

14. Հանձնաժողովի անդամներից մեկը կարող է հանձնաժողովի նախագահի կողմից նշանակվել հանձնաժողովի նախագահի տեղակալ և վերջինիս բացակայության ժամանակ փոխարինել նրան:

15. Հանձնաժողովն ունի քարտուղար, որը չի հանդիսանում հանձնաժողովի անդամ: Հանձնաժողովի քարտուղարն արձանագրում է հանձնաժողովի նիստերը և նախապատրաստում է հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

16. Հանձնաժողովի նախագահը՝

- 1) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը: Իր բացակայության դեպքում հանձնաժողովի նախագահի լիազորությունների իրականացումը հանձնարարում է խորհրդի անդամներից որևէ մեկին.
- 2) ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը.
- 3) հանձնաժողովին է ներկայացնում հանձնաժողովի նիստերի օրակարգերի նախագծերը.
- 4) համակարգում է հանձնաժողովի աշխատանքը:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

17. Հանձնաժողովի անդամները՝

- 1) իրավունք ունեն՝
 - ա. հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու հարցեր,
 - բ. ներկայացնելու հանձնաժողովի գործունեության, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ առաջարկություններ,
 - գ. ծանոթանալու հանձնաժողովի նիստերի արձանագրություններին.
- 2) պարտավոր են՝
 - ա. մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին,
 - բ. կատարել հանձնաժողովի որոշումները և նախագահի հանձնարարականները:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

18. Հանձնաժողովի քարտուղարը՝

- 1) ապահովում է հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի և նյութերի պատրաստումը.
- 2) կազմակերպում է հանձնաժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում միջոցառումների իրականացումը, հանձնաժողովի նիստերի գումարման նախապատրաստական աշխատանքները.
- 3) ապահովում է հանձնաժողովի նիստերի արձանագրության կազմումը.
- 4) ապահովում է հանձնաժողովի գործունեության մասին տեղեկատվության տարածումը.

- 5) սահմանում է հսկողություն հանձնաժողովի որոշումների իրականացման նկատմամբ.
- 6) հանձնաժողովի նախագահին է ներկայացնում հաշվետվություն իրականացված աշխատանքների մասին.
- 7) կազմակերպում է արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովներից ստացվող նյութերի հավաքումը, մշակումը և ներկայացումը հանձնաժողովի քննարկմանը.
- 8) առաջարկություններ է ներկայացնում, ըստ ուղղությունների, աշխատանքային խմբերի ստեղծման վերաբերյալ արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման ոլորտում ի հայտ եկած հրատապ խնդիրների լուծման, ինչպես նաև հիմնական խնդիրների իրականացման համար: Աշխատանքային խմբերի կազմը հաստատում է հանձնաժողովի նիստը կամ հանձնաժողովի նախագահը՝ հանձնաժողովի նիստերի միջև ընկած ժամանակամիջոցում.
- 9) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ՝ իրականացնում է այլ լիազորություններ:

ՎII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

19. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի որոշմամբ:

Աշխատակազմի ղեկավար՝



Ա.Վարդանյան



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 14

ք. Արտաշատ

< 09 > 08 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N 05 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա. ենթակետի պահանջներով.

«Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի տարածաշրջանի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ների կառավարման խորհուրդների կազմերը հաստատելու մասին» ՀՀ Արարատի մարզպետի 2011 թվականի հունվարի 26-ի N 05 որոշման հավելվածի 1-ին տողում «Նարիքեկյան Նունե» և «Գրիգորյան Համլետ» բառերը փոխարինել «Նարիկյան Նունե» և «Գրիգորյան Գրիգոր» բառերով:

ՄԱՐԶՊԵՏ՝

Է. ԲԱԲՍԵՂՅԱՆ



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 13,

ք. Արտաշատ

< 09 > 02 2012թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հողերի ժամանակավոր սխեմաների և դրանց անբաժանելի մասը հանդիսացող հողաշինարարական գործի կազմման աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

ՄԱՐԶՊԵՏ՝

Է.ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հավելված

ՀՀ Արարատի մարզպետի

2012թ. փետրվարի 09 -ի

№13 որոշման

Անհատական կազմ

Հողերի ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող հանձնաժողովի.

- Է. Բարսեղյան - ՀՀ Արարատի մարզպետ (**հանձնաժողովի նախագահ**)
- Ա. Օրդոյան - ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի վարիչ (**հանձնաժողովի քարտուղար**)
- Ք. Սարգսյան - ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Արարատի տարածքային բաժնի պետ
- Հ. Հովհաննիսյան - ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության Արարատի տարածքային բաժնի պետ
- Գ. Գալստյան - „Արարատի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն” ՓԲԸ-ի տնօրեն
- Ս. Հակոբյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության Արարատի և Արմավիրի տարածքային բաժնի պետ
- Ս. Պետրոսյան - ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության էներգետիկայի պետական տեսչության կենտրոնական միջմարզային բաժնի առաջատար մասնագետ
- Ա. Բաղայան - ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի աշխատակազմի Արարատի մարզային ստորաբաժանման հաշվառման տվյալների մուտքագրման բաժնի պետ



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 12

ք. Արտաշատ

< 02 > 02 2011թ.

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 16.05.2011 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 37 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Արարատի մարզպետի 2011 թվականի մայիսի 16-ի <<Քաղաքացիական պաշտպանության ծառայություններ ստեղծելու մասին>> թիվ 37 որոշման 1 կետը լրացնել 10-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

<<10) Բնակչության հարուկ սպասարկումների ծառայության պետ՝

Արարատի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ>>:

ՄԱՐԶՊԵՏ

Է.ԲԱՐՍԵՂՅԱՆ



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 11.

ք. Արտաշատ

< 02 > 02 2012թ.

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» և «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներով և ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ.օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» թիվ 1180-Ն որոշման.

Որոշում եմ՝

1. Ստեղծել Արարատի մարզի բնակչության տարահանման հանձնաժողով՝ /համաձայն հավելված 1-ի/:
2. Արարատի մարզի տարահանման հանձնաժողովի կազմում ստեղծել աշխատանքային խմբեր՝ համաձայն հավելված 2-ի/:
3. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին, իրենց վարչական տարածքներում ստեղծել՝
 - Տարահանման հանձնաժողովներ.
 - Համապատասխան քանակի տարահանման հավաքակայաններ.
 - Ժամանակավոր տեղաբաշխման կետեր.

4. Մարզի համայնքների ղեկավարներին՝

1) Պարտավորեցնել համայնքի տարածքում գործող խոշոր ձեռնարկություն-ների, հիմնարկների, և կազմակերպությունների ղեկավարներին՝ ստեղծել օբյեկտային տարահանման հանձնաժողովներ.

2) Որոշել տարահանման հավաքակալայանների կառուցվածքը և կազմը, մշակել ՏՀԿ կառուցվածքային մարմինների գործառնական պարտականությունները և ներկայացնել հաստատման, եռամսյա ժամկետում:


5. Ուժը կորցրած ճանաչել Արարատի մարզպետի 03.07.2001թ. «Արարատի մարզում բնակչության տարահանման հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 43, 31.08.2007թ. «Արարատի մարզում բնակչության տարահանման հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 117 որոշումները:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Արարատի մարզպետի տեղակալ, տարահանման հանձնաժողովի նախագահ Ա.Մուրադյանի վրա:

ՄԱՐԶՊԵՏ՝



Է.ԲԱՐՍԵՂՅԱՆ



«Արարատի մարզպետի»

2012 թ. 02 09 թիվ -11 որոշման

Արարատի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի կազմը.

- Ա.Մուրադյան Հանձնաժողովի նախագահ՝
Արարատի մարզպետի տեղակալ.
- Ա.Լալայան Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝
ՏԻ և ՀԳՏՄ հարցերով
վարչության պետ.
- Մ.Ստեփանյան Հանձնաժողովի քարտուղար՝
Արարատի մարզպետարանի
քարտուղարության վարչության պետ:

Հանձնաժողովի անդամներ՝


- Ա.Հախվերդյան - «ԱրմենՏել» ՓԲԸ-ի Կենտրոնական տարածքային կենտրոնի Հ և Տ գրասենյակի ղեկավար
- Ա.Սարգսյան - Քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ
- Հ.Բաղանյան - Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետ
- Ա.Հակոբյան - Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ
- Լ.Խաչատրյան - Ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
- Հ.Ավետիքյան - «Հայ. Էլ. ցանցեր» ՓԲԸ «Արաքս» մասնաճյուղի գլխավոր ճարտարագետ
- Վ.Սանոյան - Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ
- Ս.Ատոմյան - Ոստիկանության Արարատի մարզային վարչության շտաբի պետ

- Մ.Դավթյան - Քաղաքաշինության վարչության
ճարտարապետաշինարարական բաժնի
գլխավոր մասնագետ
- Ա.Հակոբյան - Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
- Գ.Ավետիսյան - Առողջապահության և սոցիալական ապահովության
վարչության պետ
- Գ.Մուրադյան - Արարատի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավարի տեղակալ

Աշխատակազմի ղեկավար՝



Ա. Վարդանյան



ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀՀ Արարատի մարզպետի

2012 թ. 02.02 թիվ -11 որոշման

Արարատի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի աշխատանքային խմբերը՝

1.Վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խումբ.

Խմբի ղեկավար՝

Ա.Մկրտչյան - Կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ

Խմբի անդամներ՝

Ա. Պետրոսյան - Կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

Ս.Շահինյան - Կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ

Մ.Կարապետյան - Կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ

Ս.Նազարյան - Կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ

2.Անվտանգ գոտում բնակչության տեղաբաշխման հաշվառման խումբ.

Խմբի ղեկավար՝

Հ.Տերտերյան - Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ

Խմբի անդամներ՝

- Ե. Հակոբյան - Քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
- Ռ. Միսակյան - Հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջին կարգի մասնագետ
- Մ. Դավթյան - Քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ
- Ա. Սարգսյան - Քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ

3. Հիվանդանոցի անձնակազմի և հիվանդների անվտանգ դուրս բերման հաշվառման խումբ՝

Խմբի ղեկավար՝

- Հ. Բադալյան - Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետ

Խմբի անդամներ՝

- Լ. Հակոբյան - Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի առաջատար մասնագետ
- Գ. Ասատրյան - Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի գլխավոր մասնագետ
- Վ. Ղազարյան - Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի առաջատար մասնագետ

4. Տրանսպորտային ապահովման խումբ.

Խմբի ղեկավար՝

- Ա. Հակոբյան - Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ

Խմբի անդամներ՝

- Հ.Առաքելյան - ՏԻ և ՀԳՏՄ հարցերով վարչության
ՏԻ և համայնքային ծառայության
հարցերի բաժնի պետ
- Վ.Գրիգորյան - Քաղաքաշինության վարչության
տրանսպորտի և ճանապարհաշինության
բաժնի առաջատար մասնագետ

Աշխատակազմի ղեկավար՝



Ա. Վարդանյան